



### 73. ԲԱԼԱՔ ԱՉԱՌ

Սպահանա թագավոր աղքատանոց՝մ իբաց, էսաց հաւր տղղն. - Ես կը մեռնըմ, խըյոթաթ էլմ կը բանցըցիս:

Խեր մեռաւ, տղղեն էլմ բանցըցուց:

Օրին մեկ դավրիշ՝մ էկավ ան դե, ուսկըմ տվըն ծեռ, ուսկըն իթալ, գինաց տան վիրըն քունծ:

Ասըն. - Դավրիշ, ինչո՞ւ ուսկըն կը թըլիս:

Էսաց. - Մեկ ուսկը՞ն էլ խըյոթաթ կըլնը:

Խապար տվըն թագավորըն, ասըցըն. - Դավրիշ՝մ կա՛ն ան տե, ուսկըմ տվընք ծեռ, ուսկըն իթալ:

Թագավոր էսաց. - Կանչըցը՞ք ան դավրըշ, թը գա՛ն աս տե, խեմ՝ ինչ մարդ ի:

Կանչըցըն, դավրըշ գինաց մա թագավոր, թագավոր էսաց. - Դավրը՛շ բաբա, դաւ իմ խըյոթաթ չըս ընդունիր, իմ ուսկըն թլիր իս:

Դավրըշ էսաց. - Թագավոր՛ւր ապրած կանս, դաւն թագավոր, ամոթ չի՞ մեկ ուսկով կըսըս խըյոթաթ կենըմ. մե ախչըկըմ կի Բասրայու դաշտ՝ բերդ՝մ շընիր ի ան տե, քանսուն փենճերե թուղիր ի, ամեն փենճերից չավրե՛մ կը գա՛ն տակ, ամեն չավրը ճութ քանսուն քիսա, դաւն թագավոր՝ մեկ ուսկով խըյոթաթ կենըս:

Թագավոր էսաց. - Ես դավրըշ բռնե՛ք, մինչիվ իս կան: Կը գան, թա աղուրթ իլավ, գդավրըշ չրաղ կենըմ, թա սուր իլավ, դավրըշը վըզ կը գարկիմ:

Դավրըշ բռնըցըն, թագավոր յուր շուրիր խագա՛վ՝ հաւր ճակիր կապըց, ծըն խիծաւ, դայալըմ ուսկը իթալ ծիու քանակ, գի-

նաց ու ընցկուն կան իրի, Բասրայու դաշտ չըգընտավ, եդ ղըյպե ուսկըն կիրավ, չըգընտավ, հաւր ճակիր ծախըց, կիրավ, չըգընտավ, հաւր ծըն էլ ծախըց, կիրավ, էլ չըգընտավ:

Թագաձվուր էսաց. - Յե՛յ վախ, իս ինչ իր՝ իրի իմ խիտ, դավրիչի՛մ խուսքով իմ թագաձվուրութենիցն էլ իլա:

Բանձր քա՛ր՛ն ադա տեղն էր, էսաց. - Տ՛էլըմ ադա քա՛րի գլխիս, ըգի թլիմ տակ, մեռնիմ, դարվըջը խուսքով ընկիր իմ աշխար, կան կը գա՛մ:

Թագաձվուր գինաց քա՛րի գլխիս, հետ կը դառնա, խուզըն քաղցր ի:

Մեկ խովըվըմ անաւ դիմաց նստած կըլնը, խովըվ կանչից. - Աղի՛կ կըտորըճ ճեհեւ, ինչ կէնըս ադ տե, երի՛, տիսնանք քաւ դարտ ինչ ի, գքի քա՛րվը թըլիս տակ:

Թագաձվուր գինաց խովըվու մոտ, էսաց. - Իս հիտիվ Բասրայու դաշտըն կան կը գա՛մ, չըգընտա, դայպե՛մ ուսկը կիրա, չըգընտա, ճակիր ծախըցը, կիրա, չըգընտա, իմ ծըն ծախըցը, կիրա, շուրի ծախըցը, կիրա, չըգընտա. իսն էլ իմ դարդանաց ըգի տը թլիմ տակ, մեռնիմ:

էսաց. - Քաւ տուն ակոլ չըլնը, կէլնըս աս կըրի վերեն, Բասրայու դաշտ կը տիսնըս:

Թագաձվուր գինաց կըրի գլխիս, տիսավ Բասրա, Բասրայու դաշտ, տիսավ բերդըմ շինի, բըռճիր իլի Ֆալաք<sup>33</sup>:

Թագաձվուրն ի իջավ գինաց, գինաց հեռջիվ, տըսավ աղուրթ՝ քառսուն փենճերե թղիր ի հեռջըվ, վուր փենճերըն գինաց, չավրե՛մ վիրուց իկավ տակ, իբաց, ամին չավրը ճութ քառսուն քիսա:

Թագաձվուր գինաց, ներս մտավ, ութ օր մնաց ադ տե, երկու դան, իրեք դան կուտըր, կը նստըր ան տե:

Օրեն մեկ՝ անաւ խատամուչ էսաց. - Իս կուզըմ քաւ խանոււմ տիսնամ:

Եդ խատամն էլ մեկ շամառ իզար տըրը իրես, էսաց. - Ի՞նչ գուրծ ունիս իմ խանոււմի խիտ, դաւ ծարավ չըս, անոթը չըս, բիբիկ, տկուզ չըս, էլ ի՞նչ գուրծ ունըս իմ խանոււմուչ խիտ:

<sup>33</sup> Շատ բարձր՝ երկինք, Աստուծո մոտ (Ծ.Բ.):

Գինաց, խանութուց էաց. - Մեկ մարդ ութ օր կա, իկի աս տե, կուտը, կը խըմը, ասօր էաց՝ իս կուզըմ քու խանութ տիս-նամ, իսն էլ մեկ շամառ զարկիր իմ:

Խանութ էաց. - Դիե՛լ փուշդ, դու ընչի՞՞ զարկիցըր, ան մարդըն էլ կըլնը մե բան կասը: Կանչի՛, թը գա՛ աս տե:

Խանութ գինաց, կանչից, էրի խանութուց մոտ:

Խանութուցն էլ ականջկալա էրին, ասըցըն. - Քու պազըրկան իրի:

Պազըրկանն էլ իրի, խանութուց մոտ նստավ:

- Պազըրկան, - կասը խանութ, - իրի՛, խենք, ինչ արիր:

Պազըրկան էաց. - Քանսուն ըղտաբեռ մալ կիրա, բա՛մ չըխասկացա, ամին ուրբաթ օր սահաթ խընզըն Բալաք աչառ տը խիծըն, տը գա՛, մանչ էրկինք, մանչ գետիքն ինի, կը գա՛, ուր խոր խաս պաղչեն կը նստը, կը կըլպըթա, էրկու չուպուխճի կը գան ադ տե, մեկն ան թիվ կը կայնը, մեկ՝ ան թիվ. կալոն ան մեկ կը լըցընի՝ կը խըմը, մեկն էլ ան մեկ կը լըցընը: Դեմ վի կը կանգըն, թուրըմ կը զանի մեկ անու վըզ, մեկ՝ անու, էրկուսն էլ կը սպանը: Բալաք աչառ կը խիծըն, մանչ էրկինք, մանչ գետիքն ինի, կերթա, խատ մարդու չըխուսը, չըտա, չառնը:

Ադ ախչընկն էլ ատա մարդուն էաց. - Ագախար, իմ պազըրկան ինչ էաց, ան մարդ ինչ կասի՝ Զինա թագա՛վուրու տըղեն ի: Իս, ան մատընքնիր խատ մա մեկու փուխիր ինք, ան ըզի տ՛առնիր: Մըկա ալ չըմ գտի՝ ինչու խամար ըզի էլ չառնը: - էաց, - Թե դու գնացըր, Զինա թագա՛վուրու լաճու հեւթուն ըզի խամար բիրըր, թը չըբիրըր՝ քու խուզըն դնին անձակ գուգուս, իմ ձեռնեն չըս ազատվը:

Էդ մարդ էաց. - Կուզիմ քինե խուրճ՛մ ուսկը, էրթամ խիվ:

Իլավ, գինաց Զինա թագա՛վուրը քաղաք, ուրբաթ օր սահաթ խընզին գնաց թագա՛վուրը խաս պաղչեն:

Տիսավ՝ Բալաք աչառ խիծի, մանչ էրկինք, մանչ գետիքն ինի կը գա՛: Իրի, խաս պաղչեն նստավ, վուր կըլպըթաց, չուպուխճի՛մ մեկ ան թիվ դադրավ, մեկ՝ ան թիվ: Կալոնըմ ան ըլից, խմավ, մեկն էլ ան մեկ իլից, խմավ, մեկն էլ դեմ վի կանգնավ, էրկուսն էլ սպանից, մանչ էրկինք, մանչ գետիքն ինի գինաց, խատ մարդու մը՛նչ էտու, մը՛նչ առըց:

Էաց. - Բա՛մ չըխասկացա անու մոտեն:

Մնաց մեկէլ ուրբաթ օր, էլի սահաթ խընգին էլամ, հաւր շուրիւր իխան, դավրիշի՛մ շաւր խագա՛ւ, դաւֆըմ բռնից հաւր ձեռ, գինաց, խասամ պաղչեն, նստամ:

Տիսամ էլմ Բալաք աչառ խիժը, մանչ երկինք, մանչ գետին ինի իրի, իրի, ա տեղ նստամ: Որ նստամ, կըլպըլթաց, չըպըխճի՛մ՝ մեկ ան թիվ դադրամ, մեկ՝ ան թիվ, կալո՛ւմ՝ մեկ ան իլից խմամ, թափ իտու, մեկ ան իլից խմամ, թափ իտու: Դեմ վի կանգամ, երկուսն էլ սպանից, Բալաք աչառ խիժամ, գինաց:

Եսա դավրիշ հընկավ իտիվեն, կանչից. - Յա հաճի, յա հու, յա հաճի, յա հու:

Դարձամ, իրիշից հիտիվ, տըսամ՝ դավրիշ՛մ անաւ իտիվեն կերթա, ուր չավրեն իթալ:

Դավրիշը չավրեն առըց, էլմ հիտիվ գինաց, կանչից. - Յա հաճի, յա հու, յա հաճի, յա հու:

Իրիշից տըսամ՝ դավրիշ էլմ իտեն կերթա: Իրիշից հաւր վերա, բանըմ չըտըսամ:

Չաւր չեփկեն ի խան, իթալ, գչեփկեն առըց, իտու անթը տակ, էլմ ընկա՛ւ իտեն. - Յա հաճի, յա հու, յա հաճի...:

Իրիշից, հաւր վերա բանըմ չըտիսամ: Ալմաստ բաւր խանչալ որ մեջքն էր, քեշից, իթալ:

Ալմաստ բաւր խանչալն էլ առըց, իտու անթըտակ, իտիվեն էլմ՝ յա հաճի, յա... ձեն տվեց:

Դադրամ, էսաց. - Կը գա՛ գլոխս օր թուրմ սրբիմ անաւ վըգ. իս իմ չավրեն թըլցի՝ քանսուն քիսա անու գինն ի, չեփկեն թըլցի՝ խարիւր քիսա, անաւ ալմաստ բաւր խանչալ թըլցի, Չինա թագա՛ւ-վուրը քաղթի գին ի, թը ան տանըր, խուցուտվըր, ինչ խըլըսներ, էլմ թը գեր:

Եդ դավրիշն էլ էսաց. - Իս քաւ քանսարը բաղդ ինչ մանչ քաւ սըրտըմ դաւ կը սիրիս, ըզը տանըս քաւ կոնախ:

Էսաց. - Դաւ չըտվըր իմ քանսարը բաղդ, քի տը սպաններ, լե դաւ տըվըր քանսարը բաղդ, գքի չըմ սպանը:

Էսաց. - Իս կերթամ, իմ իտեն էրի՛:

Գինաց, տըսամ բերդ՛մ շինի: Սարե՛մ մանչ վար քաւրը գլխուն, տըսամ աղա Բալաք աչառ ինչ խիժիւր էր, կապըց սան վի, խուրձ՛մ կարմաշո փետ առըց, բիրը, կը գարկը:

Ադ ալ ասըց. – Մեղք ի, մը՝ զարկի՝ Աստուծո սիրուն ըլնը, մը՝ զարկը:

- Կը զարկիմ, չըզարկիմ, դու ի՞նչ գուրծ ունիս խիստ:

Ա ընցկու՛ն իզար, կաշի՛ն վուրնից վե իբի վը:

Թուղ իտու, գաճըն տուն:

Վլացվան, խաց դրին ան տե, կիրան:

Դավրիշ տաց. - Դու, քու քնսարը բաղդ, դու քու կասան ծը խամար ինիս:

Էսաց. - Վալա՛, դու չըտվըր քնսարը բաղդ, իս թուրըմ զանի քու գլխի, քու գլխի էնա փանծարեն ինի երթեր դուս, տըվըր քնսարը բաղդ, ազատար:

Էսաց. - Իս էլ թագա՛վուրը տըղա էր, մարդ ուներ, հըրկվընից կը նստեր, օրեն մեկ հիրիկուն քունս տարավ, իսն էլ իմ մարդիրուն ասըցը՝ ասօր քունս կը տանը, էլեցե՛ք, գինացե՛ք, իմ խոր մոտ նստեցե՛ք:

Մարդիր էլան, գինացըն, քունըն չըտարըց: Մեկն էլ տըսա՛ դուռ բացվավ: Փարի՛մ, երկու չանկի, երկու չալըղծի, երկու ուսկը սանտալ աթոռ:

Ուսկը աթոռ մեկ իս նստա, մեկ՝ փարին: Մենք ձեռ թըլցընք իրար թիվ, իմ հա՛շ գաճը, իս ընկիր իմ ադ տե: Մեկն էլ տըսա՛ մարդ չըկա, վուվ ծը ըռաստ գեր, կը զարներ, կը սպաներ: Տավար գեր, ուչխար գեր, մարդ գեր, կը զաներ: Օրեն մեկ ասըցըն. «Թագա՛վուր ապրած կինաս, էս ֆլան սարը մեջ մարդ կա, ան տե ծուռ կը սաղացըցե, քա տըղեն տանըս ան տե, սաղանա»:

Իմ խեր ըզի իլավ, առըց, տարըց ան տե իթուղ, դարձավ իրի, վուր դարձավ իրի, իս մեկ ամսու՛մ չափ մնացը ադ տե, քիչըմ աղեկացա: Օրեն՝ մեկ տըսա խալավուր գինաց ծուվու բիրան, մեկ պառավ՛մ առըց իբի, ծի էսաց. «Քի մեր՛մ իմ բիրի», իս ասըցը. «Բիրիր իս, բարով իս բիրի, խաց, կիրակուլ կեփը, մի շուրիր կը լվա, կը կարը»:

Մնաց մինչիվ հիրիկվան, խալավուր ծը էսաց. - Մինչիվ ասօր իս, դու մընակ էր, մեկ հօդե՛մ կը քըներ, ասօր դու գինա՛ ջուկ հօդե՛մ:

Գնացի, նստա: Կալո՛ւմ լըցի, խմա, մեկ էլ լըցի, խմա, քունս չըտարըց: Իս ասըցը. «Տ՛երթամ, իրըշիմ խալավուր, պառավ ինչ կե՛նին»:

Գինացը դռան ծակտիր ինի - իրիշիցը նիրս, տիսա

խալաՎաւր կապըմ իցգի պառվաւ վըգ: Քեշից, տարըց դես, իբի դեն, զպառաՎ խեղդից, իթալ ան տե: Պարկըմ կա, էդա պատեն կախ էր: Պարկ իրի վե, էրկու բարակ օծ միջեն իխան, իթուղ ադա պառաՎի ջանդակը վրեն: Ադ պառվու էրուն ծծըցըն, ամեն մեկ խաստացան, հէլան քանց սուն: Իբի, օծերու պուչ կապըց հառքեն, հեռջիվ ամեն օծու իրիք չանախ իդի վար մեկ մեկը: Ադ էրուն անունց բերնեն թափավ: Չանախքիր էրկու ծակից իրիքըն կայնավ: Բերըց ադա էրուն իլից մեկ կթոցըմ, իդի ըռաՖը վերեն: Ադ օծեր թամիզ'մ վլաց, էլմ իդի պարկ վե, բիրան կապըց, կախըց պատեն, լըվացվավ, խաց կիրավ, պարկավ ան տե, քինավ: Իսն էլ դարծա, էկը իմ տեղ, ալ քունս կը տանը", չըքնա մինչիվ առավուտ:

Առավուտ էլա, էկը մա խալաՎաւր, խալաՎաւր էսաց. - Քու մեր մեռը:

Իս ասըցը՝ մեռը, Աստված իտու, Աստված տարավ:

ԽալաՎաւր էսաց. - Իս պառաՎ կառնըմ, կը թըլիմ ծուվ, դաւ փլավ կէնըս, եղն էլ կի ըռաՖը վրեն, կը բիրըս, լըցիս վերեն, կուտիս, մինչիվ իս կը գամ:

Իսն էլ բիրը, փլավ իփիցը, դըրը քանսեն, անժուր կիրա, քիչըմ էլ դըր քանսեն, էդ զեխիր բիրի, լըցի վերեն, գտել մեջ տնկիցը, մինչիվ խալաՎաւր իրի, իրի, էսաց՝ փլավ իփիրը"ս:

Ասըցը. - Իփիրըմ, իզն էլ լըցիր իմ, կիրիր իմ, հալա կես մացիր ի աս տե:

ԽալաՎաւրն էլ կասը. - Խամ չըկա մեջ, անու խամար չըմեռավ:

Գինաց, նստավ քանը վերեն, գտելըմ ինչ կիրավ, չուրցավ հաւր տեղ: Իսն էլ էլա, ադա պըզտի դաւռ բաց էրի, տըսա՝ բան չըկեր ան տե, մեկ քանըմ խատ գիրք կեր, մեկ պըզտիկ գիրքըմ էլ ադա գրքերու վրեն դրած: Ադա պըզտիկ գիրք առը, կարդացը, վուր կարդացը, մեկն էլ տիսա՝ փարըն, էրկու չանկըն, էրկու չալըըճըն՝ ուսկը աթոռ խիտնիր, էկան ան տե: Ուսկը աթոռ իս նստա վերեն, մեկ փարըն, ձեռքեր թըլցընք վուր մեմեկու թիվին, էրկու չալըըճըն զարկըն, էրկու չանկըն խաղցըն մինչիվ առավուտ:

Ինչ ժամանակ գիրք կարդեր, էլմ կը գեր:

Չօրեն մեկ տղսա՝ իմ խոր կաննին իկավ, ան տե կայավ, իմ խեր կանուց դուս էլավ, իրի իմ մոտ, էսաց. - Ա՛յ որդի, սաղացե՞ր իս:

Իսն էլ ասըցը. - Իս սաղացիր իմ, խալավուր մեռեր ի:

Իմ խերն էլ էսաց. - Ճեհնե՛մ, դու սաղացիր իս, թո խալավուր մեռնը:

Մինքն էլ իլանք, էկանք, ցստանք կաննին: Կաննին թուղ իտու, էկընք, ծովուց դուս էլանք:

Իս իմ խուր ասըցը. - Դու գինացե՛ք, իս քիչ՛մ լուղանամ, գան, ծի կը խասնիմ:

Անոնք գինացըն: Իս իմ խալավքիր խանը, դըրը ան տե, իմ գիրք բըռնըցը իմ ձեռ, մտա մանչ ծուվուս, կը լուղկաներ: Մեկն էլ տղսա՝ մեկ մարդըմ էկավ ան տե, էսաց. «Ա՛յ մարդ, դու քու խալավքիրու մոտեն չըս վախիմա, քու գրքու մոտեն կը վախիմաս: Քու գիրք դի՛ վըր խալավքիրուն, մըտի՛ ծուվ, լուղա՛ցը, հիլի՛ դուս: Քու խալավքիր խա՛քը, քու գիրք դի՛ քու ծուց, գնա՛»: Իսն էլ ասըցը՝ անու խուսքն ի, դըրը իմ գիրք խալավքիրու վրեն, մտա ծուվ, կը լուղաներ: Մեկն էլ տղսա՝ գգիրք առըց, հայ վար ծովուն գինաց: Ջրըց դուս էլա, իմ խալավքիր խագան, ալ իմ խոր քանղաք չըգանցը, իկա ըս տե, բերդ՛մ աս տե շինիր իմ, ցստիր իմ ինի: Ինչ իս իկեր էր աս տե, մինչիվ աս օրիս մարդու խիտ չէր խուսը:

էսաց. - Ասա Բալաք աչառ կը տիսնա՞ս՝ ան փարու խուրուխքիրն ի: էրկու խուսք ան գրքից միտս մնացիր ի, մեկ ան կը կարդամ անու, ան էրկու չուպուխճին ինչ կը գան, անու աղբերքերն ին, իսն էլ իմ դարտանաց կը զարկիմ, կը սպանիմ, ինչ կը կարդամ, էլմ կը գան: Ամեն ուրբաթ օր իմ խուր խաս պաղչեն մըտըս կըյնը, իսն էլ կերթամ ան տե, էրկու սահաթվան չանք կը մնամ ան տե, կըլլիմ գան:

էսաց դավրըշին. - Իս գըտիմ, Բասրայու դաշտը խխչըկն ի գքի դըրկը աս տե, ա ընցկուն մարդ դրկից աս տե, մարդ մ՛ իմ հույուքին չառըց, դու էկըր, առըր: Գինա՛, էսա՛, քան ըգի մեր, քան ըգի քուր կենա ծի, իս քի չը՛մ առնը, վո՛ւվ կառնը, ա՛ռ, խիրըք ի ան մալ խարճիս ծը ապով, քի չըմ առնը:

էդ դարվըշն էլ էսաց. - Ձի՛մ տու ծը, դըյպե մ՛էլ ուսկը տու՛, իս տ՛իրթամ գըրքը հիտիվ, գիրք բիրիմ:

Ադ ալ էսաց. - Չա՛յ, դարվի՛շ բաբա, գուրժ չունիս, դու չըս

կերի բիրի, գինա՛ խատ քիւ բանին:

Դարվիչ տաց. - Չէ՛, տը տաս, իս էրթամ իտևեն:

Եսաց. - Տամ, տա՛ր քի խամա կի՛:

Դարվիչն էլ իլավ, ծըն խիծավ: Դոյպե՛մ ուսկըն իթալ հիւր քանակ, ծըն քչից, գինաց մեկ քանսուն ավիւր ճամբախ, մեկ էրկըր դիւս ընկավ: Ատե շենլըկ չըկեր, քանց ջաղաց ավիլ բանըմ չըկեր, մեկ, էրկու, իրիք ջաղացք ընցավ, մեկն էլ տըսավ ջաղըրպան կանչից, էսաց. «Սպահանա թագա՛վուրու տըղա՛, դո՞ւր կերթաս»:

Ան տե ծըն կայնացըցոց, մտածից, էսաց. - Ասիկ իս քանսուն ավիւր ճամբախ իկիր իմ, ասա ջաղըրպան ինչ գիտը՝ իս Սպահանա թագա՛վուրը տըղեն իմ:

Ջաղըրպան էսաց. - Ի՞նչ կը մտածիս, դա՛րծը էսա տեղ, աղա գուրծ ինչ դիւ իտևեն կերթաս, իս չըլլիմ, դիւ չըս կերի բիրի:

Եսաց. - Ըպա իս քի չըմ ճանչընա: Դիւ ըզի կը ճանչընա՞ս:

Դարծավ, էկավ մատ ջաղըրպան, ջաղըրպան էսաց. - Մինք խրիչտակնիր ինք, իրիք օր քիւ խուր խըյրաթ ի մնացիր իմ, քիւ խուր խուզըն էլ իս իմ առը: Քու խեր շատ աղեկ խեր կենըր, իս անիւ խաթըր խամար տը շանց տամ, էրթաս, ան գիրք բիրիս, իս գըտիմ, դիւ ան գըրքըն իտևեն կան կը գանս, իս չըլըմ, դիւ չըս կերի: Կերթաս Ստամբուլ՝ դիւս կըլընըս, կերթաս Եյուպ, դիւս կը բանան, էրկու դարվիչ կա ան տե, դիւ էլ գքի կը տաս վար աջ թիվին դռան իտևին, միենչիվ սահաթ խընգին, կըսըս. «Դարվիչ բաբանքտիր, դիւ ընչի՞ չըք խուսը»: Անիւնք էլ կասըն. «Սարեն դիւ կը գանս, ծիւրեն դիւ կը գանս, աշխարեն դիւ կը գանս, խուսք քիւն ի, մինք ի՞նչ տը խուսընք»:

Դիւն էլ էսա. «Ըզի թու խուսք չըկա, իմ խուսք էն ի՛ ծի թագա՛վուր իմ ծեն լսեր, ինն օր, ինն ամըս, ին սահաթ, ին տաղըգա լմաներ, Աստված անիւ տը տեր տըղե՛մ: Թագա՛վուրն էլ ան ժամանակ կու գա՛ դռան վերեն, ականջ կենը, կը դառնա, կերթա: Տըղե՛մ աղա թագա՛վուրըն տ՛ըլընը, ըն սահաթըն մեջ էլ ախչըկ՛մ Չիչանց թագա՛վուրըն տ՛ըլընը, ադ ախչըկ, ադ տըղեն տը սըրվին իրարիւ վերեն: Ադ տըղեն ինչ կը միծանա, դիւ էլ թագա՛վուրն էսա. «Թագա՛վուր, քիւ տըղըն կասըս՝ ան ախչըկ ինչ կը գա՛ քիւ տըղը մոտ, ըսը՛, թը չըգա՛ քիւ մոտ, ախչըկ ասը՛ վըրե՞ չըս թուղըն գանք քիւ մոտ, տըղեն էլ թը ըսը՛ դիւ գա՛ղ իք: Ախչիկ տ՛ըսը. «Մինք ի՞նչ

ինք գաղցը»: Տըղեն թըղ ըսը՝ դու մի գիրք իք գաղցը: Ան ախչընկ  
ան գիրք տը բիրի, մարդ չըկերի բիրի:

Էսաց. - Ա՛ն նա կանանչ վարուց, բըռնը՝ քու ձեռ, քանի մի  
երկըրն իս, մարդ քի թախմիչ չըլնը, ինչ մի երկրեն դուս կըլլուս,  
կանանչ վարուց քու ձեռ կը չուրնա, թալ:

Ադ ալ էլավ, կանանչ վարուց բըռնըց հուր ձեռ, գինաց,  
անհունց երկրեն ինչ դուս էլավ, կանանչ վարուց ձեռ չուրցավ,  
վարուց էթալ, գինաց, Ստամբուլ դուս իլավ, գինաց էյուս: Դուռ  
էբաց, մտավ նիրս, տըսավ աղուրթ երկու դավրիչ կան ան տե  
վար աչ թիվին, գինք իտու դռան իտենն մինչիվ սահաթը խընգին:

Էսաց. - Դարվի՛չ բաբանքտիր, ընչո՞ւ չըք խուսը:

Դարվիչները ասըն. - Աշխըրքեն դու կը գանս, սարեն, ծուրեն  
դու կը գանս, խուսք քուն ի:

Թագանվուրն էլ իմացի՝ մեկ կարիպ դարվիչըմ իկի, էսաց. -  
Վագի՛ր, իլի՛ էրթանք մատ ան դարվիչ, խենք՝ ինչ կըսը:

Անունք էկան, խասան դռան վերեն: Դավրիչն էլ էսաց ան  
դարվիչնիրուն:

- Չը թու խուսք չըկա, ըծի մեկ խուսք կա, Աստված տեր, ծը  
թագանվուր իմ ձեն լսեր, ինչ ինն օր, ինն ամըս, ին սահաթ, ին  
տագըղա լըմաներ, Աստված անու տը տեր տըղե՛մ:

Թագանվուր լսավ, էսաց. - Վագի՛ր, դառնանք, էրթանք:

Դարձան գինացին, չըմտան նիրս:

Երկու մարդու էսաց. - Լուսուն կերթըք էյուս, կը մտիք նիրս,  
մեկ կարիպ դարվիչըմ կա ան տե, կը բըռնըք, ծի խամար կը  
բիրըք:

Առավուտուն երկու մարդ էկըն, մտան նիրս, դարվիչ բըռնը-  
ցըն, ասըցըն. - Արի՛, գինանք:

Էսաց. - Թագանվուր ծը ի՞նչ տ'ենե, ի՞նչ գուրծ ունիմ թա-  
գանվուրը խիտ:

- Չէ՛, գքի ուզիրը, տը գանս, էրթանք:

Առըն, տարըն թագանվուրը մոտ, թագանվուր էսաց. - Դարվի՛չ  
բաբա, դու հիրկուն ի՞նչ իս ասը:

Էսաց. - Թագանվուր ապրած կենա, իս բանըմ չըմ ասը հիր-  
կուն:

Էսաց. - Չէ՛, ասըցըր:

Էսաց. - Իս բանըմ չըմ ըսը, մեկ խուսքըմ տըվը, իս մտա

էյուպ, էրկու դարվիշ կին ան տե, մինչիվ սահաթ խընգին չըխուսամ, ասը. «Դարվի՛շ բաբանքտիր, ընչու չըք խուսը»: Անհունք էլ ասըցըն. «Աշխըրքեն... խուսք քունն ի, իսն էլ ասըցը՝ ծի թագանվուր իմ ծեն լըսը, ինչ ինն օր ին... Աստված անու տը տեր տըղե՛մ»: Իս նա մեկ խուսքն իմ տըվը:

Թագանվուրը էլ ա ընցկուն ծիր իր, քի դեղին ի դարծի, էսաց.  
- Դարվի՛շ, նհ՛ւր ըզը տըղա ըլնը:

Դարվիշն էլ էսաց. - Աստված տը տա:

Թագանվուրն էլ էսաց. - Դե կա՛ց աս տե, թե տըղա էլավ, թագանվուրութուն ուզիս, ինչ ուզիս, իս տամ քի:

Դարվիշն էլ մնաց ադ տե, մինչիվ ժամանակ իրի:

Աստված իտու մեկ զավակըմ:

Թագանվուր էսաց. - Դարվի՛շ բաբա, դիւ քու թետերըք էրա՛, իս իմ կես թագանվուրութուն տամ քի:

Դարվիշ էսաց. - Թագանվո՛ւր ապրած, դիւ չը՛ս կերի իմ խնդիրք կատարը:

էսաց. - Իս չըկատարիմ, էլ վո՛ւվ քիւ խնդիրք տը կատարը:

էսաց. - Իմ խնդիրք քիւ տըղեն տը կատարը, դիւ չըս կերի:

– Թը կենա, իմ տըղեն միծանա, կատարը:

էս սահաթին ինչ տըղեն իլավ, Չինաց թագանվուրըն էլ մեկ ախչըկ իլավ, տըղեն, ախչըկ սիրվան իրարու վերեն:

Մեկ ժամանակըմ վերեն ընցավ, դարվիշ էսաց. - Թագանվո՛ւր ապրած կենաս, մեկ ախչիկ չըգա՞՞ քիւ տըղը մոտ:

էսաց՝ կը գա՛:

էսաց. - Կերթաս, քիւ տըղըն կըսիս՝ հիրկուն ինչ կը գա, տըղեն չըթըղնե գա՛ հիւր մոտ, ան կըսը. «Վըրե՞ չըս թըղնը գա՛մ քու մոտ», տըղեն թե ըսը՝ գիւր իք: Ան տ՛ըսը՝ ինչ իք գիւրցը, տըղեն թը ըսը. «Միր գիրք գիւրացըր իք»:

Թագանվուր էլավ, գինաց տըղը մոտ, էսաց: Ախչիկ հիրկուն իբի մա տըղեն, գիրկ իբի քիւլիւր տըղըն, տը կախվեր վըզեն, տըղեն դըմըշկուլ՛մ իտու, ախչիկ դպավ գետին:

Ախչիկ էսաց. - Դիւ ընչո՛ւ չըս թըղնը գա՛մ մա քի:

Տըղեն էսաց. - Դու գիւր իք:

էսաց. - Մինք ի՞նչ իք գիւրցը:

էսաց. - Մի գիրք գիւրցիր իք:

Ախչըկ դարծավ, լալելեն տուն գինաց:

Թագավոր եսաց. - Ախշըն, վըրե՞ կը լաս, քու սիրողն ի՞ մեռը:

Եսաց. - Չէ՛, չըմեռը, չէթուղ իս երթանք անու մոտ, իս ասը՝ ընչո՞ւ չըս թուղնը գա՛մ քու մոտ, ծի եսաց՝ դու գիղ իք: Իս ասը՝ մի՛նք ինչ ինք գիղցը, եսաց՝ մի գիրք գիղցիր իք:

Չիչանց թագավորն էլ ջառ իտու կանչիլ, ինչքան մարդ կեր անու, ամեն ժողվից, իբի, եսաց. - Վո՛ւվ նա գըրքը սալըղ կը տեք, երթա գը բիրը, իս ի՛մ կես թագավորութուն տամ անու:

Մարդ սալըղ չիտու:

Թագավոր եսաց. - Էլ մարդ մնացը՞, չէկը աս տե:

Ասըցըն. - Պառվու տըղեն մնացը, չէկը:

Թագավորն էլ եսաց. - Կանչըցը՞ք՝ ան տըղեն գա՛:

Տըղեն բիրըն, թագավոր եսաց. - Տըղա՛, գիտիմ, գիղացած բիրածըս, դիս սալըղ չը՞ս իտա:

Եսաց. - Սալըղ կը տամ, ամա շատ հեռու տեղ ի՛ կի յոթ ծովու կըղզին:

- Դու կարո՞ւղ իս երթաս, բիրիս, ի՛մ կես թագավորութուն տը տամ քի:

Եսաց. - Երկու ձկան ականց ծի խամար բիրե՛ք, մեկ էլ ծիու՛մ պուչ:

Երկու ձկան ականց բիրըն, ադա ձկան ականցքիր կապըց, իթալ վար ծուվիւն, ադա ծիու պուչն էլ իբի, մագիր իտու դիւս: Տակ-տակ մագիր կապըց հիրար, ան մեկ գլխին էլ կըպրից, նստավ ձկան ականցքիրու մեջ: Գնաց, յոթ ծուվիւ կըղզին դուս էլավ: Ադա գիրքն էլ վար մարմար քարին ի. իրիք մարդ՝ ամին մեկ կացըն մը ուրինց ձեռ բռնած, գըրքը վրեն կայնած: Սեիրի ի՛ վո՛ւվ ձեռ տա գիրք, տը գարկըն, գլխավրեն կը սպանըն:

Ադ մարդն էլ ադա ծիու մագ կախ իտու, գինաց գըրքը վրեն, ադա կուպր կպավ զգիրք: Ձմագ քեշից, գիրք խիտ իրի, կացընքն էլ թըփ-թըփ վար մարմար քարըն գարկըն:

Սեիրի եր, պատըլավ, ադ մարդն էլ զգիրք առըց, իբի, իտու Չիչանց թագավորըն: Չիչանց թագավորն էլ հուր կես թագավորութուն իտու ադա մարդուն, զգիրք իտու զախչըկ: Ախշըկն էլ զգիրք առըց, իբի, իտու գտըղըն: Տըղեն էլ զգիրք իբի, իտու գխեր:

խերն էլ զգիրք տարավ իտու դարվիշին, էսաց. - Դարվիշ, քիւ խնդիրը նա՞ էր:

Դարվիշն էլ էսաց՝ խա՛:

Թագաձուրն էլ էսաց. - Աղիկ վուչ բանըմ չը, խնդիրք երա՛, կատարիմ:

Դարվիշ էսաց. - Ըզի թու խնդիրք չըկա, իմ խնդիրք նա գիրքն էր, ծի՛մ կը տաս ըզի, ղըյպե՛մ ուսկը, իս կերթամ:

Թագաձուրն ծի՛մ, ղըյպե՛մ ուսկը իտու:

Դավրիշ ծի՛ն խեծավ, դաստ երավ Չինա թագաձուրը քա՛ղաք, իրի, Չինա թագաձուրը քա՛ղաք դուս էլավ:

Ուրբաթ օր՝ սահաթ խընգին էլմ գինաց թագաձուրու խասս պաղչեն, նստավ:

Տեսավ՝ Բալաք աչառ խիծի, էլմ էկավ, էջավ, կըլթալըթաց, չըպըխճի՛մ մեկ ան թիվ, մեկ ան թիվ դադրան, ամեն մեկ կալոն լըցըն, խմավ, դեմ վի կանգնավ, երկուսն էլ սպանըց: Բալաք աչառ խիծավ, դարձավ, գինաց:

Դարվիշն էլ իտիվեն գինաց:

Տիսավ վուր դարվիշ, էսաց. - Իմ դավրիշ անոթացը, էլմ էկավ:

Դարվիշն իտիվեն գինաց, խասավ բերդ:

Տիսավ՝ էլմ Բալաք աչառ կապըց սու՛ն վի, ա ընցկու՛ն իզար, կաշըն վուտնվի խի՛նի վե:

Վլացվավ, գաճըն տու՛ն, խաց դըրըն, կիրան:

Դարվիշն էլ ինչ գիրք դըրը անթըտակ: Անթըտակեն չըհանը դիւս:

Գիրք ծուցեն էխան, իտու ինի, էն էլ դարվիշի վուտ կզվավ, պագնից, էսաց. - Դարվի՛շ, դիւ մտի՛կ երա, ես կարդամ, դիւ կը տիսնաս:

Կարդաց զգիրք: Փարին, երկու չանկին, երկու չալըըծի՛ն՝ երկու ուսկը աթոռ խիտքիր դուռ բացըն, էկն ան տե: Ուսկը աթոռ փարին նստավ, մեկ հինք նստավ վերեն, ձեռնիր թըլցըն իրարու թիվ վերեն, երկու չալըըծի՛ն զարկըն, երկու չանկըն խաղըցըն:

Դավրեշը հա՛շ գինաց, ընկա՛վ ան տե, էլավ, քիւր իթալ հերես, սըրտ մաժըց: Հա՛շ էկավ վերեն, էլավ, նստավ:

Էսաց. - Դարվի՛շ, ա՛ն էսա մատնիք, ան ախչկա մատնիքն ի, խատ մեմեկը միք մատնիքնիր փուխիր ինք, ըս մատնիք կու

տաս, անհու կասըս՝ թա չը՛ս հավատա, աս ալ անու մատնիքն ի:  
Կասըս՝ իս ան չըմ առնը, վուվ կառնը, թը առնը, Աստված անհու  
խաց տա:

Կասի. - Դարվի՛շ, քու խնդիրքն երա՛, իս կատարիմ, իս ծուռն  
էր, ըզի ազատըցըր, իմ խուր քնդաք անտեր էր, տեր էրըր:

- Իմ խնդիրք չըկա՛, իմ խնդիրք էնա մատնիքն ի:

Դարվիշ մատնիք առըց, ձին խիծավ, իրի Բասրայու դաշտ՝  
ախչկան մոտ, մատնիք իտու զախչիկ, էսաց. - Ան կասը՝ վուվ  
կառնը, թըղ առնը, քանց իմ մեր, քանց իմ քուր կենա ըծի:

Ախչիկն էլ էսաց. - Վո՛ւվ տ՛առնըմ, գքի տ՛առնըմ:

Ան էլ էսաց՝ խա՛:

էսաց. - Աս տե կինա՞նք, թա՞ երթանք քու խուր քնդաք:

էսաց. - Իս Սպահանա թագավուրն իմ, խըյրաթի տեր իմ, իս  
տ՛երթամ:

էսաց. - Իլի՛, մալ-ապրանք բառնանք, երթանք:

էլան մալ-ապրանք բարձան, գանցըն:

Հալա ան դարվիշն բռնած ի:

Ձդարվիշ թուղ իտու, երավ հուր վագիր:

